# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 273
*08 նոյեմբեր 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N37-Ա, N38-Ա, N39-Ա, N40-Ա, որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

01 նոյեմբերի 2018 թվականի թիվ 37-Ա

ԹԻՎ 569451 ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՃՇՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 569451 վկայականը, պարզվեց որ թիվ 569451 սեփականության իրավունքի վկայականում գրված չէ համասեփականատերերի հայրանունները և հողամասի ծածկագիրը սխալմամբ գրվել է 06-041-209-29, սակայն պետք է գրվեր 06-041-0209-0030 ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թիվ 569451 սեփականության իրավունքի վկայականում ավելացնել համասեփականատերերի հայրանունները՝ Ելենա Համբարձումի Նազարյան, Արմեն Ռաֆիկի Թամարյան և ճշտել հողամասի ծածկագիրը՝ 06-041-0209-0030:
2. Սույն որոշման 2-րդ կետում նշված ուղղումները ըստ անհրաժեշտության իրականացնել նաև Լեռնապատի գյուղապետարանի կողմից տրված քաղվածքում:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. նոյեմբերի 1
գ. Լեռնապատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 38-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Լեռնապատ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել հանդիսությունների սրահը (հասցեն՝ 4-րդ փողոց, 2):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

2018թ. նոյեմբերի 07
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 39-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Հին գյուղի գյուղամեջի կանգառ, փողոց 1, /քարե շինություն/, մակերեսը՝ 6 քառակուսի մետր

2) Նոր գյուղի առաջին կանգառ, փողոց 27, /քարե շինություն/, մակերեսը՝ 6 քառակուսի մետր ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

2018թ.նոյեմբերի 07
գ.Լեռնապատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 40-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ <<ՄԱՐԱԹՈՆ-ԴՐԱՄԱՀԱՎԱՔ 2018>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, 38 հոդվածի 7 կետով և հիմք ընդունելով 23.10.2018թ.-ի Լոռու մարզպետի գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Փոխանցել << Հայաստան>> համահայկական հիմնադրամի 2018թ. մարաթոնին <<ԱՀ-ում խորքային հորերի հորատում, նոր ոռոգման ցանցի կառուցում>> և <<Արեգակնային էներգիայի համակարգի ներդրում>> ծրագրի իրականացման համար՝ ՀԿԲ հ/հ 103003215672, ՀՎՀՀ՝ 02507456 20000/քսան հազ/ դրամ, համայնքի բյուջեի 08/4/2-ի հոդված 4819-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. նոյեմբերի 07
գ.Լեռնապատ